



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## Հսկիչ-դրամարկղային մեքենաների ծրագրային ապահովում

---

Օգտվողի ուղեցույց

**Բովանդակություն**

**ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ** ..... 2

**ՍԱՐՔԻ ՍՏԵՂԱՇԱՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ** ..... 3

**ՍԱՐՔԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ և ՍՈՒՏՔ ՀԴՄ ԾՐԱԳԻՐ** ..... 4

**ՍԱՐՔԻ ԱՆՋԱՏՈՒՄ, ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄ և ՌԵԺԻՄԻ ՓՈՓՈԽՈՒՄ** ..... 7

**ԳԱՆՁԱՊԱՀԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ** ..... 8

    ՍՈՒՏՔ և ՆՈՐ ՀԴՄ ԿՏՐՈՆԻ ՏՊՈՒՄ ՊԱՏՈՒՀԱՆ ..... 9

*Պարզ ՀԴՄ կտրոնի տպում*..... 9

*Ապրանքներով ՀԴՄ կտրոնի տպում*..... 10

*Հաշվիչ ՀԴՄ կտրոնի տպում*..... 11

    ԿԱՆԽԻԿԻ ՍՈՒՏՔ ..... 13

    ԿԱՆԽԻԿԻ ԵԼՔ ..... 14

    ՀԴՄ ԿՏՐՈՆԻ ՎԵՐԱԴԱՐՁ ..... 15

    ՀԴՄ ԿՏՐՈՆԻ ԿՐԿԼՕՐԻՆԱԿԻ ՏՊՈՒՄ ..... 16

**ՍԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** ..... 17

    ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ..... 18

*Բաժիններ*..... 19

*Օգտվողներ*..... 21

*Ապրանքներ*..... 24

*Գումարային սահմանափակում*..... 27

*ՀԴՄ կասեցում* ..... 28

*Մարքի աշխատանքի օպտիմիզացիա*..... 28

    ՀԴՄ ԿՏՐՈՆԻ ՁԵԱՆՄՈՒՇ ..... 30

    ԳԱՐՏԱԲԱՌԻ (ԾԱԾԿԱԳՐԻ) ՓՈՓՈԽՈՒՄ ..... 31

    ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՊՈՒՄ ..... 32

    ԱՌԵՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ..... 33

## Փաստաթղթի մասին

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարության Հարկային ծառայության կողմից տնտեսվարող կազմակերպություններին տրամադրած նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով հարկային հաշիվների գրանցման ու գրանցված հարկային հաշիվների հետագա կառավարման գործընթացը՝ ըստ կատարվող գործողությունների կարգի և քայլերի հաջորդականության:

Ուղեցույցը կազմվել է ըստ Հսկիչ-դրամարկղային մեքենա ծրագրային միջոցի տեխնիկական, այդ թվում նախագծային, փաստաթղթերի:

Փաստաթուղթը պարբերաբար թարմացվում է համապատասխանացվելով ծրագրի առկա աշխատանքին և նրանում պարբերաբար կատարվող թարմացումներին ու փոփոխություններին:


## Սարքի ստեղնաշարով աշխատելու կանոններ

ՀՀ Ֆինանսների նախարարության Հարկային պետական ծառայության տրամադրած նոր սերնդի ՀԴՄ սարքի ծրագրային ապահովումը թույլ է տալիս հրահանգներ տալ և տվյալների մուտքագրումներ կատարել ինչպես ՀԴՄ սարքի էկրանի միջոցով (Touch-Screen), այնպես սարքի ստեղնաշարի կոճակների օգնությամբ (Keyboard shortcuts):

Ստորև ներկայացված է Հսկիչ-դրամարկղային մեքենա ծրագրում ՀԴՄ սարքի ստեղնաշարից օգտվելու կանոնները:

- **[Մուտք]** կոճակը կիրառվում է, եթե ցանկանում եք հաստատել առաջարկվող գործողության կատարումը:
- **[Ջնջել]** կոճակը կիրառվում է, եթե ցանկանում եք ջնջել ծրագրի ցուցադրվող պատուհանի տվյալների դաշտերում նոր կատարած մուտքագրումները կամ խմբագրումները:
- **[1], [2], [3], [4], [5], [F1], [F2], [F3], [F4]** կոճակները կիրառվում են ծրագրի ցուցադրվող պատուհանում առկա հրահանգները ստեղնաշարի միջոցով գործադրելու համար: Այս դեպքում ցուցադրվող պատուհանում առկա յուրաքանչյուր հրահանգի դիմաց նշվում է ստեղնաշարի համապատասխան կոճակը (օրինակ **(2) Հարկային Հաշիվներ**):
- Ստեղնաշարով կարելի է մուտքագրել ինչպես թվային, այնպես տեքստային տվյալներ (հայերեն կամ անգլերեն): Սարքի ստեղնաշարի միջոցով թվային արժեքների մուտքագրումից տառային արժեքների մուտքագրումին (հայերենին կամ անգլերենին) կամ տառային արժեքների մուտքագրումից թվային արժեքների մուտքագրումին անցնելու համար հարկավոր է սեղմել ստեղնաշարի աջ ներքևում տեղադրված **[ALPHA]** կոճակը: **[ALPHA]** կոճակը հաջորդաբար սեղմելու միջոցով սարքի ստեղնաշար փոխվում է Թվային սիմվոլներ > Հայերեն (մեծատառ) > Հայերեն (փոքրատառ) > Անգլերեն (մեծատառ) > Անգլերեն (մեծատառ) հերթականությամբ: Հաշվի առեք նաև, որ.
- Հայերեն փոքրատառ **“և”** տառը ստեղնաշարով մուտքագրելու համար հարկավոր է մուտքագրման Հայերեն (փոքրատառ) ռեժիմում անընդմեջ 6 անգամ սեղմել **[9]** կոճակը:
- **[0\*]** կոճակը, կախված այն անընդմեջ սեղմելու անգամներից, ստեղնաշարի մուտքագրման տեքստային ռեժիմում ցուցադրում է **[միջակայք]**, **[,]**, **[\*]** կամ **[&]** սիմվոլը:
- **[.#]** կոճակը, կախված այն անընդմեջ սեղմելու անգամներից, ստեղնաշարի մուտքագրման տեքստային ռեժիմում ցուցադրում է **[#]**, **[@]**, **[%]**, **[!]**, **[?]** կամ **[\$]** սիմվոլը:

## Սարքի գործարկում և մուտք ՀԴՄ ծրագիր

ՀՀ Ֆինանսների նախարարության Հարկային պետական ծառայությունում գրանցված և արդեն ակտիվացված նոր սերնդի ՀԴՄ սարքը աշխատեցնելու համար հարկավոր է սեղմել ստեղծագծարի **ՄԿԻԶԲ** < > կոճակը (տես Նկար 1-ը ստորև):




Նկար 1: ՀԴՄ սարքի գործարկում ՄԿԻԶԲ կոճակի միջոցով

Նոր գործարկված սարքը սարքը ինքնաշխատ կկապվի ՀՀ Հարկային պետական ծառայության տեղեկատվական համակարգի հետ և կկատարի հետևյալ գործողությունների շարքը.

- Ծրագրի նախապատրաստում,
- Կապի ստուգում,
- Տվյալների ամբողջականության ստուգում,
- Համաժամանակեցում,
- ՀԴՄ ծրագրի գործարկում:

Վերը նշված գործողությունների կատարումից հետո ՀԴՄ սարքի էկրանին կցուցադրվեն ՀՀ Հարկային պետական ծառայությունում տվյալ ՀԴՄ սարքի գրանցման տվյալները (ՀՎՀՀ, հարկ վճարողի անվանում, հասցե և գրանցման համար): Սարքի էկրանի ամենավերում՝ մեկ առանձին տողով կցուցադրվի նաև տեղադրված ՀԴՄ ծրագրային միջոցի տարբերակն ու թողարկման օրը (օրինակ՝ ՕՏ՝ 2.4.6, 10-07-14 11:20):

ՀԴՄ ծրագրի մուտքի արտապատկերը տրված է Նկար 2-ում:



Նկար 2: ՀԴՄ ծրագրի մուտքի պատուհան

ՀԴՄ տվյալ սարքով աշխատելու համար հարկավոր է ՀԴՄ ծրագրի մուտքի պատուհանում լրացնել տվյալների **Համար/Գաղտնաբառ** դաշտերը և սեղմել սարքի ստեղնաշարի **Մուտք** կոճակը (տես Նկար 2-ը): Վավեր և ճիշտ լրացված տվյալների դեպքում կարտոնվի օգտվողի մուտք ՀԴՄ ծրագրային միջոց և սարքի էկրանին կցուցադրվի ծրագրային միջոցի ընտրացանկը: Ընտրացանկը ցուցադրվում է ըստ տվյալ սարքում օգտվողի Ձեր ունեցած դերի: Այն կարող է լինել **Գանձապահ (Cashier)**, **Ադմինիստրատոր (Administrator)** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր (Super Administrator)**:

Օգտվողի **Գանձապահ (Cashier)** դերով ՀԴՄ սարքը գործածելու դեպքում ծրագրի ընտրացանկը թույլ է տալիս տպել ՀԴՄ կտրոն /Պարզ, Ապրանքներ, Հաշվիչ/, իրականացնել Կանխիկի Մուտք, Կանխիկի Ելք և Կտրոնի Վերադարձ գործողությունները, ինչպես նաև կատարել դուրս գրված ՀԴՄ կտրոնի կրկնական տպում: Այս գործողությունների կատարման կարգը՝ ըստ պահանջվող քայլերի հերթականության, ներկայացված է ուղեցույցի հաջորդ Գանձապահին վերապահված գործառույթներ բաժնում:

ՀԴՄ ծրագրի ընտրացանկի պատուհանի արտապատկերը՝ օգտվողի **Գանձապահ** դերի համար, տրված է Նկար 3-ում:


Օգտվողի **Ադմինիստրատոր (Administrator)** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր (Super Administrator)** դերով ՀԴՄ սարքը գործածելու դեպքում ծրագրի ընտրացանկը թույլ է տալիս գրանցել օգտվողներ, ապրանքներ և բաժիններ, խմբագրել կամ ջնջել արդեն գրանցվածների տվյալները, սահմանել գումարային սահմանափակում, որից ավել արժեքով գործարք չի թույլատրվում իրականացնել, ժամանակավորապես կասեցնել ՀԴՄ սարքի աշխատանքը, օպտիմալիզացնել ՀԴՄ սարքի աշխատանքը, կազմել ՀԴՄ

կտրոնի ձևանմուշ /էջագլուխ, էջատակ/, փոփոխել օգտվողի ծածկագիրը /գաղտնաբառը/, արտածել ու տպել տվյալ ժամանակահատվածում կատարված գործարքների հաշվետվություն, փոփոխել առևտրային ծրագրերի հետ ՀԴՄ տվյալ սարքի ինտեգրման կարգաբերումները: Այս գործողությունների կատարման կարգը ըստ պահանջվող քայլերի հերթականության, ներկայացված է ուղեցույցի երրորդ ՀԴՄ ծրագրի կառավարում բաժնում:

ՀԴՄ ծրագրի ընտրացանկի պատուհանի արտապատկերը՝ օգտվողի **Ադմինիստրատոր** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր** դերի համար, տրված է հաջորդիվ Նկար 4-ում:



Նկար 3: ՀԴՄ ծրագրի ընտրացանկ՝ Գանձապահ դերի համար



Նկար 4: ՀԴՄ ծրագրի ընտրացանկ՝ Ադմինիստրատոր և Գլխավոր Ադմինիստրատոր դերերի համար

## Սարքի անջատում, վերագործարկում և ռեժիմի փոփոխում

Եթե ցանկանում եք արդեն աշխատող սարքը անջատել (**Shut Down**), վերագործարկել (**Reboot**), տեղափոխել ոչ ակտիվ ռեժիմի (**Sleep**) կամ փոխել նրանում տեղադրված մարտկոցը (**Remove Battery**), ապա, անկախ տվյալ պահին աշխատանքային ինչ պատուհան է բացված, 3-ից 4 վայրկյան պահեք ստեղնաշարի **ՄԿԻՉԲ** կոճակը և սարքի էկրանին կցուցադրվի թվարկված գործողությունների հրահանգների պատուհանը (տես Նկար 5-ը):



Նկար 5: ՀԴՄ սարքի անջատման, վերագործարկման և ռեժիմի փոփոխման պատուհան

Այս գործողություններից որևէ մեկը իրագործելու համար սեղմեք համապատասխան հրահանգի կոճակը (կամ սեղմեք **Չեղարկել (Cancel)** կոճակը, եթե այլևս չեք ցանկանում վերը նշված գործողություններից որևէ մեկը հրահանգել ու պարզապես անհրաժեշտ է փակել ցուցադրվող հրահանգների պատուհանը):



## Քանձապահին վերապահված գործառույթներ

ՀԴՄ սարքը գործարկելու և **Քանձապահ (Cashier)** դերով ծրագիր մուտք գործելու համար Դուք պետք է ՀԴՄ տվյալ սարքի **Կառավարչի** կամ **Գլխավոր Կառավարչի** կողմից արդեն գրանցված լինեք իբրև **Քանձապահ** և ունենաք օգտվողի վավեր Համար ու Ծածկագիր:

ՀԴՄ սարքն աշխատեցնելու և օգտվողի Ձեր տվյալներով ՀԴՄ ծրագիր մուտք գործելու կարգը նկարագրված է այս ուղեցույցի առաջին բաժնում (Սարքի գործարկում և մուտք ՀԴՄ ծրագիր) :

Օգտվողի **Քանձապահ (Cashier)** դերով ՀԴՄ սարքը գործածելու դեպքում կարելի է կատարել հետևյալ գործողությունները.


- Մուտք և ՀԴՄ կտրոնի տպում (Պարզ, Ապրանքներ, Հաշվիչ ՀԴՄ կտրոն)
- Կանխիկի մուտք
- Կանխիկի Ելք
- ՀԴՄ կտրոնի վերադարձ
- ՀԴՄ կտրոնի կրկնօրինակի տպում

Նկար 3-ում (էջ 6) պատկերված է ՀԴՄ ծրագրի ընտրացանկը՝ օգտվողի **Քանձապահ (Cashier)** դերով սարքը աշխատեցնելու դեպքում:

Հաջորդիվ ներկայացնում ենք վերը նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման կարգը՝ ըստ քայլերի հաջորդականության:

## Մուտք և Նոր ՀԴՄ կտրոնի տպում պատուհան

ՀԴՄ կտրոն դուրս գրելու (տպելու) համար հարկավոր է **Գանձապահ** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել **Նոր ՀԴՄ կտրոն** հրահանգը (տես Նկար 7-ը ստորև):



Նկար 6: Անցում Նոր ՀԴՄ կտրոնի պատուհան

Սարքը նախատեսում է **Պարզ**, **Ապրանքներ** և **Հաշվիչ** տիպի ՀԴՄ կտրոնների դուրս գրման (տպման) հնարավորություն:

### Պարզ ՀԴՄ կտրոնի տպում

Պարզ ՀԴՄ կտրոն դուրս գրելու պատուհանը տրված է Նկար 7-ում:

Այս գործողությունը կատարելու համար.

1. **Նոր ՀԴՄ կտրոն** պատուհանից անցնեք **Պարզ ՀԴՄ կտրոն** պատուհան:
2. Տվյալների **Գումար** դաշտում մուտքագրեք գործարքի (ապրանքի) արժեքը: Ծրագիրը ինքնաշխատ կլրացնի տվյալների **Առձեռն** և **Մանրադրամ** դաշտերը:
3. Ըստ հարկավորության փոփոխեք կամ անփոփոխ թողեք տվյալների **Առձեռն** դաշտում ինքնաշխատ լրացված արժեք: Եթե գործարքի գրանցումը սկսեք նախ **Առձեռն** դաշտը լրացնելով, ապա տվյալների **Գումար** կմնա չլրացված և դա պետք է մուտքագրեք ինքներդ:
4. Տվյալների ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք **Բաժինը**, որին ամրագրված է տվյալ ապրանքը:

5. Եթե կատարվում է անկանխիկ վճարում նշեք **Անկանխիկ** դաշտի նշիչը: Մուտքագրեք **Անկանխիկ** վճարման ենթակա գումարը: Եթե մուծումը կատարվում է այլ վճարային տերմինալի միջոցով ապա նշեք նաև **Այլ վճարային տերմինալ** նշիչը:
6. Սեղմեք **Տպել** կոճակը: Ծրագիրը կգրանցի գործարքը և կտալի ՀԴՄ կտրոն:

Նկար 7: Անցում Պարզ ՀԴՄ կտրոնի դուրս գրման պատուհան


### Ապրանքներով ՀԴՄ կտրոնի տպում

Ապրանքներով ՀԴՄ կտրոն դուրսգրելու պատուհանը տրված է Նկար 8-ում:

Այս գործողությունը կատարելու համար.

1. **Նոր ՀԴՄ կտրոն** պատուհանից անցնեք **Ապրանքներով ՀԴՄ կտրոն** պատուհան:
2. Սեղմեք **Ցանկ** կոճակը և **Ընտրել ապրանք** պատուհանի օգնությամբ ընտրեք վաճառվելիք ապրանքի անվանումը: Ընտրված ապրանքի տվյալները ինքնաշխատ կհայտնվեն **Ապրանքներով ՀԴՄ կտրոն** պատուհանի համապատասխան դաշտերում:
3. Նշեք վաճառվելիք ապրանքի **քանակը**:
4. Սեղմեք **Ընտրել** հրահանգը, և տվյալ ապրանքի տվյալները ինքնաշխատ կհայտնվեն գնվելիք ապրանքների ցուցակում:
5. Կրկնեք 2-ից 4 քայլերը տվյալ գործարքով իրացվող մյուս ապրանքների համար:
6. Սեղմեք **ԱՌԱՋ >** կոճակը: Ծրագիրը անցում կկատարի վճարման տվյալների մուտքագրման պատուհան ինքնաշխատ լրացնելով **Գումար** դաշտը (խմբագրելի չէ) և **Առձեռն** դաշտը

7. Եթե կատարվում է անկանխիկ վճարում նշեք **Անկանխիկ** դաշտի նշիչը: Մուտքագրեք **Անկանխիկ** վճարման ենթակա գումարը: Եթե մուծումը կատարվում է այլ վճարային տերմինալի միջոցով ապա նշեք նաև **Այլ վճարային տերմինալ** նշիչը: Ծրագիրը ինքնաշխատ կհաշվարկի և կլրացնի համապատասխան դաշտերը:
8. Համապատասխան գործողություններն ավարտելուց հետո սեղմեք **Տպել** կոճակը: Ծրագիրը կգրանցի գործարքը և կտպի **Ապրանքներով ՀԴՄ կտրոն**:



Նկար 8: Անցում Ապրանքներով ՀԴՄ կտրոնի դուրսգրման պատուհան


### Հաշվիչ ՀԴՄ կտրոնի տպում

Հաշվիչ ՀԴՄ կտրոն դուրսգրելու պատուհանը տրված է Նկար 9-ում:

Այս գործողությունը կատարելու համար.

1. **Նոր ՀԴՄ կտրոն** պատուհանից անցեք **Հաշվիչ ՀԴՄ կտրոն** պատուհան:
2. Տվյալների **Գին** դաշտում մուտքագրեք իրացվող ապրանքի գինը:
3. Տվյալների **Քանակ** դաշտում մուտքագրեք իրացվող ապրանքի քանակը:
4. Տվյալների ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք **Բաժինը**, որին ամրագրված է տվյալ ապրանքը:
5. Սեղմեք **Ընտրել** հրահանգը, և տվյալ տվյալները ինքնաշխատ կհայտնվեն գնվելիք ապրանքների ցուցակում:
6. Կրկնեք 2-ից 4 քայլերը տվյալ գործարքով իրացվող մյուս ապրանքների համար:
7. Վերընթերցեք լրացված տվյալներ՝ հավաստիանալու համար, որ դրանք ճիշտ են ու ամբողջական: Եթե լրացված ցուցակի վերջին տողում կա կրկնություն կամ անճշտություն՝ ապա հեռացրեք այդ տողը **Չեղարկել վերջին գործարքը (F1)** հրահանգի օգնությամբ:


8. Սեղմեք **ԱՌԱՋ >** կոճակը: Ծրագիրը անցում կկատարի վճարման տվյալների մուտքագրման պատուհան ինքնաշխատ լրացնելով **Գումար** դաշտը (խմբագրելի չէ) և **Առձեռն** դաշտը
9. Եթե կատարվում է անկանխիկ վճարում նշեք **Անկանխիկ** դաշտի նշիչը: Մուտքագրեք **Անկանխիկ** վճարման ենթակա գումարը: Եթե մուծումը կատարվում է այլ վճարային տերմինալի միջոցով ապա նշեք նաև **Այլ վճարային տերմինալ** նշիչը: Ծրագիրը ինքնաշխատ կհաշվարկի և կլրացնի համապատասխան դաշտերը:
10. Համապատասխան գործողություններն ավարտելուց հետո սեղմեք **Տպել** կոճակը: Ծրագիրը կգրանցի գործարքը և կտալի **Հաշվիչ ՀԴՄ կտրոն**:



Նկար 9: Անցում Հաշվիչ ՀԴՄ կտրոնի դուրսգրման պատուհան

### Կանխիկի մուտք

ՀԴՄ սարքի միջոցով կանխիկ գումարի մուտք գրանցելու համար հարկավոր է **Գանձապահ** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել **(F1) Կանխիկի մուտք [+]** հրահանգը (տես Նկար 10-ը ստորև):




Նկար 10: Անցում Կանխիկ գումարի մուտքի գրանցման պատուհան

Կանխիկ գումարի մուտք գրանցելիս պետք է մուտքագրել **Գումար** դաշտի տվյալը և սեղմել **Պահպանել** կոճակը: Տվյալների **Մեկնաբանություն** դաշտը լրացվում է ըստ հարկավորության:

### Կանխիկի ելք

ՀԴՄ սարքի միջոցով կանխիկ գումարի ելք գրանցելու համար հարկավոր է **Փանձապահ** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել **(F2) Կանխիկի ելք [-]** հրահանգը (տես Նկար 11-ը ստորև):




Նկար 11: Անցում Կանխիկ գումարի ելքի գրանցման պատուհան

Կանխիկ գումարի մուտք գրանցելիս պետք է մուտքագրել **Գումար** դաշտի տվյալը և սեղմել **Պահպանել** կոճակը: Տվյալների **Մեկնաբանություն** դաշտը լրացվում է ըստ հարկավորության:

## ՀԴՄ կտրոնի վերադարձ

ՀԴՄ սարքի միջոցով ՀԴՄ կտրոնի վերադարձ գրանցելու համար հարկավոր է **Գանձապահ** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել **(F3) Վերադարձ** հրահանգը (տես Նկար 7-ը ստորև):



Նկար 12: անցում ՀԴՄ Կտրոնի վերադարձի գրանցման պատուհան


Կանխիկ գումարի վերադարձը գրանցելու համար հարկավոր է մուտքագրել Կտրոնի համար տվյալը, և, եթե այդ համարի կտրոն իրոք դուրս է գրվել, ապա ծրագիրը դրա դուրս գրման օրը-ամիսը-տարին, գործարքի տեսակը (Առձեռն, Անկանխիկ), ժամը և գործարքի արժեքը ինքնաշխատ կցուցադրվեն սարքի էկրանին:

Կտրոնի վերադարձի գործողությունը հրազանգելու համար սեղմեք **Կատարել** կոճակը: Եթե այլևս չեք ցանկանում գործողությունը կատարել ու անհրաժեշտ է վերադառնալ ծրագրի ընտրացանկ՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ**:



### ՀԴՄ կտրոնի կրկնօրինակի տպում

ՀԴՄ սարքի միջոցով ՀԴՄ դուրս գրված կտրոնի կրկնական տպում կատարելու համար հարկավոր է **Քանձապահ** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել **Կտրոնի կրկնօրինակ** հրահանգը (տես Նկար 13-ը ստորև):



Նկար 13: ՀԴՄ դուրս գրված կտրոնի կրկնօրինակի տպում կատարելու պատուհան

## Սարքի կարգավորում և կառավարում

ՀԴՄ սարքն աշխատեցնելու և օգտվողի Ձեր տվյալներով ՀԴՄ ծրագիր մուտք գործելու կարգը նկարագրված է այս ուղեցույցի առաջին բաժնում (Սարքի գործարկում և մուտք ՀԴՄ ծրագիր) :

ՀԴՄ սարքի կարգավորումները փոփոխելու և նրանում գրանցված տվյալների ընթացիկ կառավարումը իրականացնելու համար հարկավոր է ՀԴՄ տվյալ սարքում Դուք արդեն գրանցված լինել իբրև **Կառավարիչ (Administrator)** կամ **Գլխավոր Կառավարիչ (Master Administrator)** և ունենալ օգտվողի վավեր Համար ու Ծածկագիր:

**Գլխավոր Կառավարիչ** դերով մեկ օգտվող ի սկզբանե գրանցված է լինում ՀԴՄ տվյալ սարքում: Այս օգտվողը իր դերով եզակի է՝ չխմբագրվող, և նախատեսում է միայն գաղտնաբառի փոփոխման (վերաթարմացման) հնարավորություն:

Նոր օգտվողների գրանցումը ու արդեն գրանցված օգտվողների տվյալների փոփոխումը կատարվում է տվյալ ՀԴՄ սարքի **Գլխավոր Ադմինիստրատորի** և **Ադմինիստրատորի** դեր ունեցող օգտվողների կողմից:

Օգտվողի **Ադմինիստրատոր** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր** դերով ՀԴՄ սարքը գործածելու կարելի է կատարել հետևյալ գործողությունները.


- Տվյալների կառավարում (Բաժիններ, Օգտվողներ, Ապրանքներ, Գումարային սահմանափակում, ՀԴՄ կասեցում, Սարքի աշխատանքի օպտիմիզացիա)
- ՀԴՄ կտրոնի ձևանմուշի կազմում և փոփոխում
- Գաղտնաբառի (ծածկագրի) փոփոխում
- Կատարված գործարքների հաշվետվությունների տպում
- Առևտրական ծրագրերի հետ ինտեգրման կարգավորումներ

Նկար 3-ում (էջ 6) պատկերված է ՀԴՄ ծրագրի ընտրացանկը՝ օգտվողի **Ադմինիստրատոր** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր** դերով սարքը աշխատեցնելու դեպքում:

Այս ուղեցույցի հաջորդ էջերում բացատրվում է վերը նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման կարգը՝ ըստ քայլերի հաջորդականության:

## Տվյալների կառավարում

ՀԴՄ սարքում գրանցված տվյալների (Բաժիններ, Օգտվողներ, Ապրանքներ, Գումարի սահմանափակում և այլն) ընթացիկ կառավարումը իրականացնելու համար հարկավոր է **Ադմինիստրատոր** կամ **Գլխավոր Ադմինիստրատոր** դերով մուտք գործել ՀԴՄ ծրագիր և ապա ընտրացանկում սեղմել (1) **Կառավարում** հրահանգը (տես Նկար 14-ը ստորև):



Նկար 14: Անցում Տվյալների կառավարում պատուհան


ՀԴՄ ծրագրի Կառավարում պատուհանը նախատեսում է հետևյալ գործողությունների կատարման հնարավորություն.

- Բաժիններ. Տվյալների բաժինների գրանցում և արդեն գրանցված բաժինների անունների ու կարգավիճակների փոփոխում
- Օգտվողներ. ՀԴՄ տվյալ սարքի օգտվողների գրանցում և գրանցված օգտվողների տվյալների փոփոխում
- Ապրանքներ. Ըստ բաժինների ապրանքների գրանցում (տվյալների ներբեռնում) և գրանցված տվյալների փոփոխում
- Գումարի սահմանափակում. Գործարքի գրանցման առավելագույն գումարի սահմանում
- Սարքի կասեցում. ՀԴՄ սարքի աշխատանքի կասեցում և վերսկսում
- Սարքի Օպտիմիզացիա. ՀԴՄ սարքում տեղադրված ծրագրի աշխատանքի օպտիմիզացիա

### Բաժիններ


ՀԴՄ ծրագրի **Կառավարում > Բաժիններ** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքում բաժինների գրանցման (ստեղծման) և արդեն գրանցված բաժինների անունների ու կարգավիճակների փոփոխման հնարավորություն:

Այս պատուհան մուտք գործելու համար հարկավոր է ՀԴՄ ծրագրի ընտրացանկից անցնել Տվյալների կառավարում պատուհան և ապա սեղմել **(1) Բաժիններ** հրահանգը (տես Նկար 7-ը):



Նկար 15: Անցում Բաժիններ պատուհան և վերադարձ ծրագրի ընտրացանկ

Տվյալների բաժին գրանցելը կատարվում է Նոր բաժին պատուհանի միջոցով (տես Նկար 16-ը հաջորդիվ):




Նկար 16: Անցում Նոր բաժին պատուհան

ՀԴՄ սարքում տվյալների բաժին գրանցելու համար.

1. Սեղմեք Բաժիններ պատուհանի **Նոր բաժին** հրահանգը և անցեք Նոր բաժին պատուհան:
2. Տվյալների **Անուն** դաշտում մուտքագրեք ստեղծվելիք բաժնի անվանումը:
3. Տվյալների ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք ստեղծվելիք բաժնի տեսակը (ԱԱՀ-ով հարկվող, ԱԱՀ-ով չհարկվող, Շրջանառության հարկ, Արտոնագրված վճար, Հաստատագրված վճար):
4. Որոշեք ստեղծվելիք բաժնի կարգավիճակը ((Գործող կամ Չգործող):
5. Լրացված տվյալներով բաժին գրանցելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և գրանցված բաժինը կցուցադրի Բաժիններ աղյուսակում: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել տվյալների բաժին գրանցելու գործողությունը՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ**:

Տվյալների գրանցված բաժնի խմբագրումը կատարվում է Խմբագրել բաժինը պատուհանի միջոցով (տես Նկար 1-ը հաջորդիվ):



Նկար 17: Անցում Խմբագրել բաժինը պատուհան


Տվյալների գրանցված բաժնի անունը կամ կարգավիճակը փոփոխելու համար.

1. Բաժիններ պատուհանի աղյուսակում սեղմեք տվյալ բաժնի տողը, և ապա սեղմեք սարքի էկրանին հայտնված **(1) Խմբագրել** հրահանգը:
2. **Խմբագրել բաժինը** պատուհանում, ըստ հարկավորության, փոփոխեք գրանցված բաժնի անունը և ընթացիկ կարգավիճակը (Գործող կամ Չգործող):
3. Գրանցված բաժնի անվան ու կարգավիճակի փոփոխումները պահպանելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և գրանցված նոր բաժինը կցուցադրվի Բաժիններ պատուհանի աղյուսակում: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել տվյալների բաժին գրանցելու գործողությունը՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ**:

### Օգտվողներ


ՀԴՄ ծրագրի **Տվյալների կառավարում > Օգտվողներ** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքում Ադմինիստրատոր կամ Գանձապահ դերով օգտվողների գրանցման (ստեղծման) և արդեն գրանցված օգտվողների տվյալների խմբագրման հնարավորություն: Գանձապահ դերով գրանցված օգտվողների համար ՀԴՄ ծրագիրը նախատեսում է նաև բաժինների վերագրման հնարավորություն:

Այս պատուհան մուտք գործելու համար հարկավոր է ՀԴՄ ծրագրի ընտրացանկից անցնել **Տվյալների կառավարում** պատուհան և ապա ապա սեղմել **(2) Օգտվողներ** հրահանգը (տես Նկար 18-ը):



Նկար 18: Անցում Օգտվողներ պատուհան և վերադարձ ծրագրի ընտրացանկ

ՀԴՄ սարքի օգտվողի գրանցումը կատարվում է **Նոր օգտվող** պատուհանի միջոցով (տես Նկար 19-ը):




Նկար 19: Անցում Նոր օգտվող պատուհան

ՀԴՄ տվյալ սարքում օգտվող գրանցելու համար.

1. Սեղմեք Օգտվողներ պատուհանի **Նոր օգտվող** հրահանգը և անցեք **Նոր օգտվող** պատուհան:
2. Տվյալների **Անուն** դաշտում մուտքագրեք գրանցվելիք օգտվողի անունը:
3. Տվյալների ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք գրանցվելիք օգտվողի **դերը** (Ադմինիստրատոր կամ Գանձապահ):
4. Որոշեք գրանցվելիք օգտվողի **կարգավիճակը** ((Գործող կամ Չգործող):
6. Որոշեք գրանցվելիք օգտվողի համար գաղտնաբառ և նույնությամբ մուտքագրեք այն տվյալների **Գաղտնաբառ** և **Հաստատել** դաշտերում:
7. Լրացված տվյալներով օգտվող գրանցելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և գրանցված նոր օգտվողը կցուցադրվի **Օգտվողներ** պատուհանի աղյուսակում: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել օգտվողի գրանցման գործողությունը՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ**:

ՀԴՄ սարքում գրանցված օգտվողի տվյալների խմբագրումը կատարվում է **Օգտվողի տվյալներ** պատուհանի միջոցով (տես Նկար 20-ը):




Նկար 20: Անցում Օգտվողի տվյալներ պատուհան

Գրանցված օգտվողի տվյալները փոփոխելու համար.

1. Օգտվողներ պատուհանի աղյուսակում սեղմեք տվյալ օգտվողի տողը, և ապա սեղմեք սարքի էկրանին հայտնված **(1) Խմբագրել** հրահանգը:
2. **Օգտվողի տվյալներ** պատուհանում, ըստ հարկավորության, փոփոխեք գրանցված օգտվողի անունը, դերը (Ադմինիստրատոր կամ Գանձապահ), ընթացիկ կարգավիճակը (Գործող կամ Չգործող), գաղտնաբառը:
3. Գրանցված օգտվողի տվյալներում կատարված փոփոխումները պահպանելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող

գործողությունը և սարքի էկրանին նորից կցուցադրվի Օգտվողներ պատուհանը: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել օգտվողի տվյալների փոփոխման գործողությունը՝ պարզապես սեղմեք < **ՀԵՏ**:

ՀԴՄ սարքում գրանցված Գանձապահ դերով օգտվողին բաժիններ վերագրելը կատարվում է **Բաժիններ** պատուհանի միջոցով (տես Նկար 21-ը հաջորդիվ):



Նկար 21: Անցում Վերագրել բաժիններ պատուհան

Գանձապահ դերով օգտվողին բաժինների վերագրումներ կատարելու համար.

1. Օգտվողներ պատուհանի աղյուսակում սեղմեք տվյալ օգտվողի տողը, և ապա սեղմեք սարքի էկրանին հայտնված **(2) Վերագրել** հրահանգը:
2. **Վերագրել բաժիններ** պատուհանի ձախ աղյուսակում ցուցադրվում են ՀԴՄ սարքում գրանցված և դեռևս որևէ օգտվողի չվերագրված բաժինները: Պատուհանի աջ աղյուսակում ցուցադրվում են տվյալ օգտվողին վերագրված բաժինները: Օգտվողին նոր բաժին վերագրելու կամ արդեն վերագրված բաժինը հեռացնելու համար նախ ընտրեք տվյալ բաժինը և ապա սեղմեք համապատասխանաբար **Վերագրել** (**>>**) կամ **Հեռացնել** (**<<**) կոճակը:
3. Գանձապահ օգտվողի վերագրումներում կատարված փոփոխումները պահպանելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և սարքի էկրանին նորից կցուցադրվի Օգտվողներ պատուհանը: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել գանձապահ օգտվողի վերագրումների փոփոխման գործողությունը՝ պարզապես սեղմեք < **ՀԵՏ**:



### Ապրանքներ

ՀԴՄ ծրագրի **Տվյալների կառավարում > Ապրանքներ** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքում ապրանքների տվյալների գրանցման, խմբագրման և ապրանքատեսակների ցանկերի ներմուծման հնարավորություն:

Այս պատուհան մուտք գործելու համար հարկավոր է ՀԴՄ ծրագրի ընտրացանկից անցնել **Տվյալների կառավարում** պատուհան և ապա սեղմել **(3) Ապրանքներ** հրահանգը (տես Նկար 22-ը):

Նկար 22: Անցում Ապրանքներ պատուհան և վերադարձ ծրագրի ընտրացանկ

ՀԴՄ սարքում ապրանքատեսակի գրանցումը կատարվում է **Նոր ապրանք** պատուհանի միջոցով (տես Նկար 23-ը հաջորդիվ):

Նկար 23: Անցում Նոր ապրանք պատուհան


ՀԴՄ սարքում ապրանքատեսակ գրանցելու համար.

1. Սեղմեք Ապրանքներ պատուհանի **Նոր ապրանք** հրահանգը և անցեք **Նոր ապրանք** պատուհան:
2. Տվյալների **Կոդ** դաշտում մուտքագրեք գրանցվելիք ապրանքի կոդը (օրինակ՝ Ս0001):
3. Տվյալների **Անուն** դաշտում մուտքագրեք գրանցվելիք ապրանքի անվանումը (օրինակ՝ Գրիչ):
4. Տվյալների **Գին** դաշտում մուտքագրեք գրանցվելիք ապրանքի գինը (օրինակ՝ 50.50):
5. Տվյալների **Չափի միավոր** դաշտում՝ ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք գրանցվելիք ապրանքի համար չափի միավոր (տուփ, լիտր, կիլոգրամ, գրամ, հատ, այլ): Ցած բացվող ցուցակում “այլ” տարբերակը նշելու դեպքում հարկավոր է տվյալների կից դաշտում մուտքագրել չափի միավորի անվանումը:
6. Տվյալների **Ընտրել** բաժինը դաշտում՝ ցած բացվող ցուցակի օգնությամբ նշեք ՀԴՄ սարքում գրանցված բաժինը, որին ամրագրվելու է գրանցվելիք ապրանքը:
7. Ըստ հարկավորության ակտիվացրեք տվյալների **Զեղչ** ընտրանքը (եթե տվյալ ապրանքատեսակը դա նախատեսում է), և տվյալների կից դաշտում մուտքագրեք չեղջվելիք տոկոսը (օրինակ՝ 12): Եթե ապրանքատեսակը որևէ զեղչ չի նախատեսում՝ պարզապես մի ակտիվացրեք **Զեղչ** ընտրանքը:
8. Աչքի անցկացրեք լրացված տվյալները և ըստ անհրաժեշտության ուղղումներ արեք նրանցում:
9. Լրացված տվյալներով ապրանքատեսակ գրանցելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և գրանցված նոր ապրանքատեսակը կցուցադրվի Ապրանքներ պատուհանի աղյուսակում: Եթե այլևս չեք ցանկանում շարունակել ապրանքատեսակ գրանցելու գործողությունը՝ պարզապես սեղմեք < **ՀԵՏ**:

ՀԴՄ սարքում գրանցված ապրանքատեսակի տվյալների փոփոխումը կատարվում է Խմբագրել ապրանքը պատուհանի միջոցով (տես Նկար 24-ը հաջորդ էջում):


ՀԴՄ սարքում գրանցված ապրանքատեսակի տվյալները փոփոխելու համար.

1. Ապրանքներ պատուհանի աղյուսակում նշեք տվյալ ապրանքատեսակի տողը, և ապա սեղմեք սարքի էկրանին հայտնված (1) **Խմբագրել** հրահանգը:
2. **Խմբագրել ապրանքը** պատուհանում, ըստ հարկավորության, փոփոխեք գրանցված ապրանքատեսակի տվյալները:
3. Աչքի անցկացրեք ապրանքատեսակի լրացված տվյալները և ըստ անհրաժեշտության ուղղումներ արեք նրանցում:
4. **Ապրանքատեսակի տվյալներում** կատարված փոփոխությունները պահպանելու համար սեղմեք **Պահպանել** հրահանգը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և սարքի էկրանին նորից կցուցադրվի Ապրանքներ պատուհանը: Եթե այլևս չեք ցանկանում կատարել ապրանքատեսակի տվյալների փոփոխություն՝ պարզապես սեղմեք < **ՀԵՏ**:



Նկար 24: Անցում Ապրանքների տվյալներ պատուհան

ՀԴՄ սարքում ապրանքատեսակների ցանկերը՝ ըստ բաժինների, կատարվում է **Ապրանքատեսակների ցանկեր** պատուհանի միջոցով (տես Նկար 25-ը):




Նկար 25: Անցում Ապրանքների ցանկեր պատուհան

ՀԴՄ սարքում ապրանքատեսակների ցանկ ներբեռնելու համար.

1. Ապրանքներ պատուհանում՝ ցած բացվող ցուցակի օգնությամբ ընտրեք **բաժինը**, որի համար ցանկանում եք ներբեռնել ապրանքատեսակների ցանկ:
2. Սեղմեք Ապրանքներ պատուհանի **Ներբեռնել** հրահանգը և անցեք Ապրանքների ցանկեր պատուհան:

3. Ապրանքների ցանկեր պատուհանում նշեք բոլոր այն ցանկերը, որոնք ցանկանում եք ներբեռնել տվյալ բաժնի համար:
4. Սեղմեք **Ներբեռնել** կոճակը: Ծրագիրը ինքնաշխատ կկապվի ՀՀ Հարկային պետական ծառայության տեղեկատվական համակարգից ինքնաշխատ ՀԴՄ սարք կներբեռնի պահանջվող տվյալները և գործողության կատարման մասին կցուցադրի հզամապատասխան հաղորդագրություն (տես Նկար Է-ը ստորև):
5. Սեղմեք էկրանին ցուցադրվող հաղորդագրության **Լավ** կոճակը՝ այն փակելու և վերստին Ապրանքներ պատուհան վերադառնալու համար:




Նկար 26: Հաղորդագրություն տվյալների ներբեռնման կատարման կամ չկատարման մասին:

### Գումարային սահմանափակում

ՀԴՄ ծրագրի **Տվյալների կառավարում** > **Գումարի սահմանափակում** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքում առևտրային գործարքի գրանցման առավելագույն գումարի սահմանման հնարավորություն:

Այս պատուհան մուտք գործելու համար հարկավոր է ՀԴՄ ծրագրի ընտրացանկից անցնել **Տվյալների կառավարում** պատուհան և ապա սեղմել (4) **Գումարի Սահմանափակում** հրահանգը (տես Նկար 7-ը հաջորդիվ):



Նկար 27: Անցում Գումարի սահմանափակում պատուհան և վերադարձ ծրագրի ընտրացանկ


ՀԴՄ սարքում առևտրային գործարքի առավելագույն գումար սահմանելու համար.

1. Գումարային սահմանափակում պատուհանում մուտքագրեք (կամ խմբագրեք) տվյալների առավելագույն գումարը: Եթե չեք ցանկանում առևտրային գործարքի առավելագույն գումար սահմանել՝ պարզապես որևէ թիվ մի լրացրեք այս դաշտում:
2. Սեղմեք **Պահպանել** կոճակը: Ծրագիրը կկատարի պահանջվող գործողությունը և սարքի էկրանին վերստին կցուցադրվի **Տվյալների կառավարում** պատուհանը:

### ՀԴՄ կասեցում

ՀԴՄ ծրագրի **Տվյալների կառավարում** > **Սարքի կասեցում** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքի աշխատանքի ժամանակավոր կասեցման հնարավորություն:

ՀԴՄ սարքի աշխատանքը կասեցնելու համար հարկավոր է Ադմինիստրատոր օգտվողի տվյալներով մուտք գործել ՀԴՄ ծրագիր, ծրագրի ընտրացանկից անցնել **Տվյալների կառավարում** պատուհան, սեղմել **(5) Սարքի կասեցում** հրահանգը և ապա սեղմել **Հաստատել** կոճակը: Կասեցված ՀԴՄ սարքի աշխատանքը վերականգնելու համար անհրաժեշտ է լինելու մուտքագրել տվյալ սարքում գրանցված Ադմինիստրատոր կամ Գլխավոր Ադմինիստրատոր դերով որևէ օգտվողի գաղտնաբառ: (տես Նկար 7-ը հաջորդիվ):




Նկար 28: ՀԴՄ սարքի աշխատանքի կասեցում

### Սարքի աշխատանքի օպտիմիզացիա

ՀԴՄ ծրագրի **Տվյալների կառավարում** > **Սարքի օպտիմիզացիա** պատուհանը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքի աշխատանքի պարբերական բարելավման (օպտիմիզացիայի) հնարավորություն:

ՀԴՄ սարքի աշխատանքը օպտիմիզացնելու համար հարկավոր է Ադմինիստրատոր (կամ Գլխավոր Ադմինիստրատոր) օգտվողի տվյալներով մուտք գործել ՀԴՄ ծրագիր, ծրագրի ընտրացանկից անցնել **Տվյալների կառավարում** պատուհան, սեղմել **(6) Սարքի օպտիմիզացիա** հրահանգը և բացված պատուհանում ապա սեղմել համանուն կոճակը:

**Հաստատել** կոճակը (տես Նկար 29-ը ստորև): Սարքի էկրանին կցուցադրվի հաղորդագրություն, որ գործողության կատարումը կարող ժամանակատար լինել և անհրաժեշտ է, որ ողջ ընթացքում սարքը չանջատվի և մշտապես միացված մնա հոսանքի սնուցման աղբյուրին: Գործողության կատարումը թույլատրելու կամ չթույլատրելու համար համապատասխանաբար սեղմեք Այո կամ Ոչ կոճակը:




Նկար 29: Անցում սարքի աշխատանքի օպտիմիզացիայի պատուհան

## ՀԴՄ կտրոնի ձևանմուշ

ՀԴՄ ծրագրի ընտրացանկը նախատեսում է ՀԴՄ տվյալ սարքով դուրս գրվելիք կտրոնների ձևանմուշի հնարավորություն:

ՀԴՄ կտրոնի ձևանմուշ կազմելու կամ արդեն կազմված ձևանմուշը փոփոխելու համար հարկավոր է Ադմինիստրատոր (կամ Գլխավոր Ադմինիստրատոր) օգտվողի տվյալներով մուտք գործել ՀԴՄ ծրագիր, ծրագրի ընտրացանկում սեղմել **(2) Կտրոնի ձևանմուշ** հրահանգը և բացված համանուն պատուհանում մուտքագրել կամ խմբագրել **Կտրոնի սկիզբ** և **Կտրոնի վերջ** դաշտերը (տես Նկար 30-ը ստորև):



Նկար 30: Անցում Կտրոնի ձևանմուշ պատուհան

**Կտրոնի ձևանմուշ** պատուհանում մուտքագրումներ կամ խմբագրումներ կատարելուց հետո կարելի է նախ սեղմել **F3 Տպել նմուշը** կոճակը (տեսնելու ինչպիսին է լինելու դուրս գրվելիք ՀԴՄ կտրոնների տեսքը), ու հետո նոր սեղմել **Պահպանել** հրահանգը: Եթե այլևս չեք ցանկանում պատուհանում մուտքագրված կամ խմբագրված տվյալները գրանցվեն՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ** և վերադարձեք ծրագրի ընտրացանկ:


### Գաղտնաբառի (ծածկագրի) փոփոխում

Ադմինիստրատոր կամ Գլխավոր Ադմինիստրատոր դեր ունեցող օգտվողի համար ՀԴՄ ծրագրի ընտրացանկը նախատեսում է իր գաղտնաբառը ինքնակամ փոփոխելու հնարավորություն:

(Գանձապահ դեր ունեցող օգտվողը ինքնակամ չի կարող փոփոխել իր գաղտնաբառը. Դա պետք է անեն Ադմինիստրատոր կամ Գլխավոր Ադմինիստրատոր դեր ունեցող օգտվողները՝ տվյալ Գանձապահ օգտվողի տվյալները խմբագրելով (**Տվյալների կառավարում** > **Օգտվողներ** պատուհան):

Ճեն կարող փոփոխել իրենց ՀԴՄ տվյալ սարքով դուրս գրվելիք կտրոնների ձևանմուշի հնարավորություն:

Իր գաղտնաբառը փոփոխելու համար Ադմինիստրատոր կամ Գլխավոր Ադմինիստրատոր օգտվողը պետք է մուտք գործի ՀԴՄ ծրագիր, ծրագրի ընտրացանկում սեղմի **(3) Գաղտնաբառի փոփոխում** հրահանգը և բացված համանուն պատուհանում մուտքագրի իր ընթացիկ (Հին) փոխված (Նոր) գաղտնաբառերը տես Նկար 31-ը ստորև):



Նկար 31: Անցում Գաղտնաբառի փոփոխում պատուհան


Գաղտնաբառի փոփոխումը ավարտին հասցնելու համար հարկավոր է **Հաստատել** դաշտում ճշտորեն վերամուտքագրել փոխված (**Նոր**) գաղտնաբառը և սեղմել **Պահպանել** կոճակը: Եթե օգտվողը այլևս չի ցանկանում կատարել գաղտնաբառի փոփոխություն, ապա հարկավոր է պարզապես սեղմել **< ՀԵՏ** և վերադառնալ ծրագրի ընտրացանկ:



### Կատարված գործարքների հաշվետվությունների տպում

ՀԴՄ ծրագրի ընտրացանկը նախատեսում է ընտրված ժամանակահատվածում կատարված ՀԴՄ գործարքների հաշվետվության արտածում և տպում: Հաշվետվությունը կարող է լինել ինչպես ամբողջական, այնպես էլ ըստ առանձին բաժինների, գանձապահների, վճարման եղանակի (կանխիկ կամ քարտային) և հաշվետվության տեսակի (X կամ Z հաշվետվություններ):

Կատարված ՀԴՄ գործարքների հաշվետվություն ստանալու համար հարկավոր է Աղմինիստրատոր (կամ Գլխավոր Աղմինիստրատոր) օգտվողի տվյալներով մուտք գործել ՀԴՄ ծրագիր, ծրագրի ընտրացանկում սեղմել **(4) Հաշվետվություններ** հրահանգը և բացված համանուն պատուհանում մասնավորեցնել, թե որ ժամանակահատվածի համար և ինչ բնութագրերով հաշվետվություն էք ցանկանում տպել (տես Նկար 2-ը ստորև):




Նկար 32: Անցում Հաշվետվություններ պատուհան

Հաշվետվության ժամանակահատվածը և բնութագրերը ընտրելուց հետո սեղմեք **Տպել** կոճակը: Ծրագիրը ինքնաշխատ կկազմի պահանջվող հաշվետվությունը և այն դուրս կբերի սարքի ՀԴՄ տպիչի միջոցով: Եթե այլևս չեք ցանկանում արտածել ՀԴՄ գործարքների հաշվետվություն՝ պարզապես սեղմեք **< ՀԵՏ** և վերադարձեք ծրագրի ընտրացանկ:

## Առևտրական ծրագրերի հետ ինտեգրման կարգավորումներ

ՀԴՄ ծրագրի ընտրացանկը նախատեսում է առևտրային այլ ծրագրերի հետ տվյալ ՀԴՄ սարքի ինտեգրման համար անհրաժեշտ կարգավորումների կառավարման հնարավորություն (տես Նկար 33-ը ստորև):



Նկար 33: Անցում Առևտրային ծրագրերի հետ ինտեգրման կարգավորումների պատուհան

Առևտրային ծրագրերի հետ ինտեգրման կարգավորումներ պատուհանում նոր մուտքագրումներ ու խմբագրումներ կատարելիս հարկավոր է միանգամայն վստահ լինել, որ այդ փոփոխությունները իրոք ճիշտ են ու անհրաժեշտ: Փոփոխությունների ճշտության մեջ դեռևս մտավախություն ունենալու դեպքում **Պահպանել** հրահանգը սեղմելու փոխարեն սեղմեք **< ՀԵՏ**, վերադարձեք ծրագրի ընտրացանկ: